Կ Ա Ր Ծ Ի Ք

ԱՄԱԼՅԱ ԳԱԳԻԿԻ ՍԱՖԱՐՅԱՆԻ՝ ‹‹ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԸ›› ԹԵՄԱՅՈՎ ԺԲ.00.02՝ ‹‹ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ›› ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Իրավական, ժողովրդավարական պետության պոզիտիվ սահմանադրական պատասխանատվությունն է հավաքների ազատության կոլեկտիվ իրավունքի անխոչընդոտ իրականացման գործուն երաշխիքների ապահովումը:

Խաղաղ, առանց զենքի հավաքների ազատությունը անմիջական ժողովրդաիշխանության ինստիտուտներից է, հասարակական և պետական նշանակություն ունեցող գործընթացներին քաղաքացիների ակտիվ մասնակցության և տեսակետների արտահայտման կարևորագույն կառուցակարգ, որը հատուկ է ժողովրդավարական հասարակություններին:

1995 թվականի հուլիսի 5-ին ընդունված Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 26-րդ հոդվածը սահմանում էր, որ ‹‹**Քաղաքացիներն** ունեն խաղաղ, առանց զենքի **ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր** անցկացնելու իրավունք››:

2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխությունների արդյունքում Սահմանադրության 29-րդ հոդվածում ամրագրվեց, որ ‹‹**Յուրաքանչյուր ոք** ունի խաղաղ, առանց զենքի **հավաքներ** անցկացնելու իրավունք››:

Այսինքն, սահմանադիրը այս հիմնարար իրավունքի սուբյեկտների շրջանակը ընդլայնեց՝ նախատեսելով ոչ միայն քաղաքացիների, այլև յուրաքանչյուրի համար: Բացի այդ, ‹‹ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր›› հասկացությունները ներառվեցին մեկ ընդհանուր՝ ‹‹հավաքներ›› հասկացության մեջ: Միաժամանակ, սահմանվեց, որ զինված ուժերում, ոստիկանությունում, ազգային անվտանգության, դատախազության մարմիններում ծառայողների, ինչպես նաև դատավորների և սահմանադրական դատարանի անդամների կողմից այդ

իրավունքների իրականացման սահմանափակումներ կարող են նախատեսվել միայն օրենքով:

2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված Սահմանադրության 44-րդ հոդվածը հինգ մասերում առավել ամբողջական սահմանեց հավաքների ազատությունը՝ թե՛ որպես մարդու և քաղաքացու իրավունք, թե՛ սահմանադրական ինստիտուտ, նախատեսեց ինքնաբուխ հավաքների հնարավորությունը, ամրագրեց հավաքների ազատության սահմանափակման հիմքն ու նպատակները:

Հավաքների ազատության իրավունքի իրականացումը կարևոր է, միաժամանակ՝ խրթին ու խնդրահարույց, քանի որ ուղեկցվում է մասնավոր ու հանրային իրավունքների և օրինական շահերի բախման, անորոշ թվով անձանց սահմանադրական իրավունքների կամ հանրության շահերի անհամաչափ սահմանափակման վտանգներով:

Թեև խաղաղ, առանց զենքի հավաքներ կազմակերպելու և դրանց ազատորեն մասնակցելու հիմնարար իրավունքն ունի իրացման ներպետական և միջազգային իրավական հիմքեր, օրենսդրորեն ամրագրված երաշխիքներ ու կառուցակարգեր, սակայն, ինչպես վերը նշվեց, գործնականում առաջանում են այդ իրավունքի իրացման բազմաթիվ խնդիրներ, որոնց բազմակողմանի և խորքային գիտական ուսումնասիրության անհրաժեշտությունն ու հրատապությունն առավել քան հիմնավորված են:

Այս առումով արդիական ենք համարում Ամալյա Գագիկի Սաֆարյանի թեկնածուական ատենախոսությունը՝ նվիրված հավաքների ազատության սահմանադրական հիմքերին և իրացման հիմնախնդիրներին:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, հիմնական մասը կազմող երեք գլխից և յոթ ենթագլխից, եզրակացությունից, հավելվածներից և օգտագործված գրականության ցանկից:

Հետազոտության օբյեկտը հավաքների ազատությունն է՝ որպես հիմնարար իրավունք, միաժամանակ, ժողովրդավարական պետության և քաղաքացիական հասարակության կայացման ու զարգացման համար կարևոր ինստիտուտ:

Ուսումնասիրության առարկան են կազմում հավաքի հասկացությունը, նշանակությունը, տեսակները, հավաքների ազատության իրավունքի իրացման կառուցակարգը, հավաքներին մասնակցելու իրավունքի սահմանափակման հիմքերը, հավաքների ազատության իրավունքի իրացման իրավական մշակույթը, ինչպես նաև ոստիկանության դերը հավաքների ազատության իրավունքի ապահովման գործում:

Խնդրո առարկային համապատասխան՝ հեղինակն ուսումնասիրել է ‹‹հավաք›› հասկացությունը և հավաքների սոցիալական, իրավական, քաղաքական նշանակությունը, ներկայացրել է հավաքների տեսակներն ու դրանց առանձնահատկությունները, քննարկել հավաքների կազմակերպման և անցկացման փուլերն ու կառուցակարգերը, հավաքներին մասնակցելու իրավունքի սահմանափակման հիմքերը:

Ատենախոսը վերլուծել է ՀՀ Սահմանադրության, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի և բազմաթիվ այլ միջազգային իրավական ակտերի՝ խաղաղ հավաքներին վերաբերող դրույթները, ուսումնասիրել ՀՀ Սահմանադրությունը, ‹‹Հավաքների ազատության մասին›› ՀՀ օրենքը, այլ նորմատիվ իրավական ակտեր, Սահմանադրական դատարանի որոշումներն ու կարևորել հանրային իշխանության մարմինների և պաշտոնատար անձանց կողմից խաղաղ հավաքները պաշտպանելու և մասնակիցների նկատմամբ հարգանք ու հանդուրժողականություն ցուցաբերելու, խտրական վերաբերմունքը բացառելու պոզիտիվ պարտականությունը, եթե հավաքների ընթացքում կազմակերպիչներն ու մասնակիցները բռնի գործողությունների չեն դիմում կամ բռնություն չեն հրահարում, հակաօրինական վարքագիծ չեն դրսևորում:

Հեղինակը քննարկման առարկա է դարձրել բազմաթիվ հարցեր՝ կապված հավաքների ազատության իրավունքի իրականացման սահմանադրաիրավական և կազմակերպական արդի հիմնախնդիրների, հավաքների ազատության

իրավունքի արդյունավետ իրացման առումով հասարակության ու պաշտոնատար անձանց իրավագիտակցության և իրավական մշակույթի աստիճանի բարձրացման կարևորության, ոստիկանության դերակատարության և այլ հարցերի հետ:

Ատենախոսը հիմնավորել է պետության իրավասու մարմինների կողմից սահմանադրական և միջազգային իրավական այն պահանջի բարեխիղճ կատարման անհրաժեշտությունը, ըստ որի՝ հավաքների. հանրահավաքների, ժողովների, երթերի, ցույցերի, հրապարակային միջոցառումների այլ տեսակների կազմակերպման և անցկացման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման, հասարակական կարգի պաշտպանության, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Հավաքների անցկացման սահմանափակումները պետք է լինեն հիմնավորված և համաչափ այն վտանգին, որ կարող է վրա հասնել հավաքն անցկացնելու հետևանքով:

Ամալյա Սաֆարյանն ուսումնասիրել է թեմային վերաբերող մասնագիտական գրականություն, Հայաստանի Հանրապետության, Գերմանիայի, Շվեյցարիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի Դաշնության և այլ պետությունների սահմանադրական օրենսդրությունը, վերլուծել Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի հանձնարարականները, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումները, միջազգային իրավական բազմաթիվ վերաբերելի ակտեր՝ արդյունքում ներկայացնելով մի շարք եզրահանգումներ ու առաջարկություններ:

Համամիտ ենք հեղինակի այն եզրակացությանը, որ **հավաքների ազատության լիարժեք իրացումն ապահովող սահմանադրաիրավական կառուցակարգը ներառում է սեփական իրավունքները իրացնող սահմանադրաիրավական հարաբերությունների սուբյեկտների ակտիվ իրավաչափ վարքագիծը, դրա ապահովմանն ուղղված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը, հավաքների ազատությունը իրացնելու և**

պաշտպանելու իրավաբանական երաշխիքներն ու սահմանադրորեն թույլատրելի սահմանափակումները:

Այս համատեքստում ատենախոսը նպատակահարմար է գտնում ‹‹**առավել ընդգծված դիտարկել հանրային իշխանության դերակատարության առաջնահերթությունը, որն ունի երկակի դրսևորում՝ խաղաղ հավաքների ակտիվ պաշտպանության պոզիտիվ պարտականություն և պետության կողմից հավաքի բնականոն և խաղաղ ընթացքի ապահովում**:›› (ատենախոսության 142-րդ էջ):

Հեղինակը հավաքի կազմակերպման և անցկացման փուլերում (իրազեկում, հավաքի սկիզբ և ավարտ, հավաքի դադարեցում) առանձնակի կարևորում է հավաքի կազմակերպչի (ղեկավարի) դերակատարությունը: Հավաքների ընթացքում հավասարակշռված որոշումներ կայացնելու անհրաժեշտությունից ելնելով՝ առաջարկում է օրենսդրորեն ամրագրել հավաքի կազմակերպչի պատասխանատվության որոշակիացմանը վերաբերող դրույթ՝ բացառելով կազմակերպչի պատասխանատվությունը հավաքի մասնակից հանդիսացող անձանց կամ սադրիչների արարքների համար (ատենախոսության 9-րդ, 142-143-րդ էջեր):

Իրավապահ մարմինների գործունեության ընթացքում իրավական արժեքներից որևէ մեկին նախապատվություն տալիս՝ առաջարկում է որպես չափանիշ ընդունել ոչ միայն իրավունքը կամ ազատությունը, այլև այն, թե դրա իրացման արդյունքում ինչ չափով է խոցելի դառնում մրցակցության մեջ գտնվող իրավունքը (143-րդ էջ):

Դրական ենք գնահատում ատենախոսությունում հավաքների առանձին տեսակների հանգամանալից վերլուծությունը, բացօթյա, շտապ, ինքնաբուխ, հակադարձ հավաքների առանձնահատկությունների բացահայտումը (ատենախոսության 1-ին գլխի 3-րդ ենթագլուխ):

Ամալյա Սաֆարյանը իրավացիորեն անդրադարձել է ֆլեշմոբերին՝ որպես արդի աշխարհում հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ կարծիքն ազատորեն արտահայտելու յուրօրինակ ձևի, որը կարող են

կազմակերպել թվային տեխնոլոգիաների (էլեկտրոնային հաղորդագրությունների, սոցիալական ցանցերի) միջոցով (ատենախոսության 42, 43, 44-րդ էջեր):

Համամիտ ենք իրավական մշակույթի մասին հեղինակի դիտարկումներին, մասնավորապես այն եզրակացությանը, որ ‹‹իրավական մշակույթի ձևավորումը և զարգացումը կարող է մեծապես նպաստել իրավաչափ վարքագիծ դրսևորելու անհրաժեշտ պայմանների ստեղծմանը՝ ապահովելով Սահմանադրությանը և օրենքների պահանջներին համապատասխան մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների իրացումը›› (ատենախոսության 117-րդ էջ):

Ատենախոսն իրավացիորեն կարևորում է ոստիկանության դերը հավաքների ազատության իրավունքի ապահովման գործընթացում, առաջնային համարում բանակցային գործառույթի արդյունավետ իրականացումը, քաղաքական-իրավական երկխոսության մշակույթի արմատավորումը՝ գտնելով, որ **‹‹Երկխոսության հայեցակարգի զարգացումը կարող է մեծապես նպաստել հավաքների ազատության իրավունքի արդյունավետ իրացմանը, եթե այն դիտարկենք բանակցային ոստիկանության ստեղծման համատեքստում: Բանակցությունները կարող են էապես նպաստել լարված, բախումնային իրավիճակների հարթման գործընթացին և նվազեցնել ոստիկանության կողմից ուժի կիրառման անհրաժեշտությունը: Միաժամանակ, բանակցությունները կարող են օժանդակել հանրային հավաքի ընթացքում ոստիկանական ծառայությունների մատուցման որակի բարելավմանը, դրանով իսկ՝ ոստիկանության ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործմանը:››** (ատենախոսության 144-րդ էջ):

Ուսումնասիրության մեջ ներկայացվում են այլ եզրակացություններ ու առաջարկություններ ևս:

Միաժամանակ, մեր կարծիքով, ներկայացված հետազոտությունը զերծ չէ թերություններից ու բացթողումներից: Այսպես՝

1. ատենախոսության առաջին գլխի առաջին ենթագլխում ‹‹հավաք›› հասկացության իմաստը բացահայտելիս՝ հեղինակը գրում է.

‹‹Արդի հայերենի բացատրական բառարաններում բացակայում է «հավաք» բառի ստուգաբանությունը: Դրանցում ներկայացված են միայն «միտինգ» և «ցույց» տերմինները›› (ատենախոսության 14-րդ էջ):

Սակայն, կարևորելով գիտական բարեխղճության կզբունքը, նշենք, որ «հավաք» բառի բացատրությունը տրված է Հրաչյա Աճառյանի Հայերեն արմատական բառարանում (Հրաչեայ Աճառեան, Հայերէն արմատական բառարան, Երևան, ‹‹Երևանի Համալսարանի Հրատարակչութիւն››, 1926, էջ 71), Էդուարդ Աղայանի Արդի հայերենի բացատրական բառարանում (Երևան, «Հայաստան հրատարակչություն», 1976, էջ 835), որտեղ ներկայացված են ‹‹հավաք›› բառարմատով 50-ից ավելի բառերի բացատրություններ, Գիտությունների ազգային ակադեմիայի Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի՝ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում (Երևան, «Հայկական ՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի Հրատարակչություն», 1969, էջ 312), Աշոտ Սուքիասյանի՝ Հայոց լեզվի հոմանիշների բառարանում (Երևան, ‹‹Հայկական ՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի Հրատարակչություն››, 1967, էջ 374), Աշոտ Սուքիասյանի՝ Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարանում (Երևան, «Երևանի Պետական Համալսարան» հրատարակչություն, 2009, էջ 602-603) և այլ բառարաններում, որոնք հասանելի են նաև համացանցում:

Հատկանշական է, որ «հավաք» բառի բացատրությունը կա «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» 2-րդ հատորում (հեղինակներ՝ Հայր Գաբրիէլ Աւետիքեան, Հայր Խաչատուր Սիւրմէլեան, Հայր Մկրտիչ Աւգերեան: Տպարան ի Սրբոյն Ղազարու, Վենետիկ, 1837, 2-րդ հատորի Ցուցակ 1-ի 78-րդ էջ):

2.Ատենախոսության ներածությունում հետազոտության փորձառական (էմպիրիկ) հիմքը ներկայացվում է հետևյալ կերպ.

‹‹Հետազոտության փորձառական հիմքն են հանդիսանում 2021 թվականին սոցիալական հարցման արդյունքում ձեռք բերած տվյալները, ինչպես նաև՝ աշխարհի տարբեր երկրներում հավաքների անցկացման հաճախականության և հավաքի մասնակիցների կողմից դրանց մասնակցության վերաբերյալ տեղեկությունների վերլուծությունը:››

(ատենախոսության 8-րդ էջ): Եվ ոչ մի խոսք չի նշվում Հայաստանի Հանրապետությունում հավաքների ազատության իրավունքի իրականացման պրակտիկայի մասին՝ որպես ուսումնասիրության հիմք:

Հարկ ենք համարում շեշտել, որ Հայաստանի Հանրապետության մասին որևէ հիշատակում չկա թե՛ ատենախոսության վերնագրում, թե՛ գլուխների և ենթագլուխների վերնագրերում: Ուստի, վերնագրերից հասկանալի չէ, թե ո՞ր երկրում հավաքների ազատության սահմանադրական հիմքերի իրացման արդի հարցադրումներն են ուսումնասիրվում, կամ հավաքների ազատության իրավունքի իրացման կառուցակարգերը, սահմանափակման հիմքերն ու սահմանները ո՞ր պետությանն են վերաբերում, կամ ո՞ր երկրի ոստիկանության դերն է ուսումնասիրվում հավաքների ազատության իրավունքի ապահովման գործընթացում: Իհարկե, բովանդակության հիմնական մասում հետազոտվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, ‹‹Հավաքների ազատության մասին» և վերաբերելի այլ օրենքներ, որոնց մասին հեղինակը նշում է ներածության մեջ՝ հետազոտության նորմատիվ հիմքը ներկայացնելիս (ատենախոսության 7-րդ էջ):

Իսկ ինչ վերաբերում է ուսումնասիրվող ոլորտում Հայաստանի Հանրապետության իրավակիրառ պրակտիկային, ապա հետազոտության հիմնական մասում հանդիպում ենք հպանցիկ նշումների, ինչպես օրինակ՝ 2013 թվականին երթուղային տաքսիների ուղեվարձի բարձրացման դեմ երիտասարդ ակտիվիստների նախաձեռնած բողոքի ցույցի մասին ‹‹Վիքիպեդիա›› ազատ հանրագիտարանի սուղ տեղեկատվությանը (ատենախոսության 41-րդ էջ), 2015 թվականին Երևան քաղաքում կազմակերպված, էլեկտրաէներգիայի գնի թանկացման դեմ ուղղված «Էլեկտրիկ Երևան» ցույցի մասին՝ նույն աղբյուրի համառոտ տեղեկությանը (ատենախոսության 41-րդ էջ), 2018 թվականին Կաթողիկոսի հրաժարականը պահանջող «Նոր Հայաստան, նոր Հայրապետ» նախաձեռնության անդամների կազմակերպած հավաքի վերաբերյալ Մայր Աթոռի տեղեկատվական համակարգի, ինչպես նաև էլեկտրոնային մամուլի

(https://www.tert.am, armenpress.am և այլ համացանցային աղբյուրների) հաղորդագրություններին (ատենախոսության 34-րդ էջ):

Սակայն, չեն ուսումնասիրվել և գիտական վերլուծության առարկա չեն դարձել Հայաստանի Հանրապետությունում վերջին տարիներին խաղաղ, առանց զենքի հավաքների ազատության իրավունքի իրականացման սահմանափակումները, հավաքի մասնակիցների իրավունքների կոպիտ խախտումների, մի քանի ժամով ազատությունից զրկելու, բռնի ուժի և անհամաչափ միջոցների կիրառման, ոստիկանների գործողությունների բնույթի, դրանց իրավաչափության հիմքերը և այլ հարցեր:

Գտնում ենք, որ ատենախոսության գիտագործնական նշանակության ապահովման առումով հարկ էր զարգացած ժողովրդավարությամբ պետությունների օրենսդրության և հաջողված իրավակիրառ պրակտիկայի առավել խորը ուսումնասիրության և վերլուծության համատեքստում անդրադառնալ Հայաստանի Հանրապետությունում ոստիկանների մասնագիտական, սոցիալ-հոգեբանական պատրաստվածության, հավաքների ազատության ապահովման վերաբերյալ նրանց վերապատրաստման, այդ նպատակով հատուկ դասընթացի մշակման, խաղաղ հավաքների մասնակիցների հետ վարվելակերպի կանոնների և ընդունելի նորմերի ուսուցանման, արդյունավետ և իրավաչափ կանխարգելիչ գործողությունների ձեռնարկման, կիրառած միջոցների համաչափության ապահովման հարցերին:

3. Որպես ատենախոսության գիտական նորույթ՝ ներածությունում նշված է. ‹‹**Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ գիտական նյութերի և օրենսդրության հիման վրա իրականացվել է հավաքների ազատության իրավունքի արդյունավետ իրացման համակողմանի հետազոտություն և առաջադրվել են միանգամայն նոր մոտեցումներ:**›› (ատենախոսության 8-րդ էջ): Այստեղ նույնպես բաց է թողնվել իրավակիրառ պրակտիկան՝ հղում անելով միայն ‹‹**գիտական նյութերին և օրենսդրությանը**››, միաժամանակ, այնքան էլ հստակ չէ, թե որոնք են ‹‹**միանգամայն նոր մոտեցումները**››:

Ապա որպես շարունակություն՝ ատենախոսության ներածական բաժնի 8-րդ էջում կարդում ենք՝

‹‹Ատենախոսության գիտական նորույթն արտացոլված է նաև պաշտպանության ներկայացվող հետևյալ դրույթներում...››:

Հաջորդիվ շարադրված է ութ դրույթ, որոնց բոլորին չանդրադառնալու նկատառումով՝ մեջբերենք միայն առաջինն ու վերջինը.

‹‹1. Հավաքները, ըստ էության, ունեն ոչ միայն զուտ ինքնուրույն սահմանադրական իրավունքի արժեք, այլև կրում են ժողովրդաիշխանության բաղադրիչի հատկանիշներ, քանի որ դրանց միջոցով, այս կամ այն չափով, ձևավորվում է հանրային ակնկալվող քաղաքական կամքը, ինչը ժողովրդաիշխանության դե ֆակտո իրականացման համատեքստում ունի վճռորոշ դեր: Այսպիսով, խաղաղ հավաքներն ունեն երկակի նշանակություն՝ անմիջականորեն դրսևորվելով իբրև քաղաքական իրավունք և միաժամանակ, որպես ժողովրդաիշխանության երաշխիք: Խաղաղ հավաքները, ըստ էության, ոչ միայն քաղաքական կամքի ձևավորման, այլև արդեն իսկ ձևավորված քաղաքական կամքի խորքային բացահայտման, դրա համակիրների շրջանակի առավել հստակ ուրվագծման, և, ըստ այդմ էլ՝ հանրային իշխանության վրա ներգործելու օրինաչափ գործիք է:›› (ատենախոսության 8-րդ էջ): Այս բոլոր դիտարկումներին համամիտ ենք, միաժամանակ, գտնում ենք, որ դրանք սահմանադրական իրավունքի գիտությանը վաղուց հայտնի ճշմարտություններ են:

Ատենախոսության գիտական նորույթն արտացոլող դրույթներից 8-րդը հետևյալն է. **‹‹8. Խաղաղ հավաքների ազատության իրավունքի հեռանկարային զարգացումը հաջորդիվ շրջափուլերում կարող է հստակ արտահայտվել միայն այն դեպքում, երբ իրական ճանաչվեն պետության և քաղաքացիական հասարակության քաղաքակիրթ փոխազդեցությունը: Ուստի, խաղաղ հավաքների ազատության իրավունքի արդյունավետ իրացման խնդիրը լուծելու համար, նպատակամետ ենք համարում իրավական մշակույթի զարգացման առանցքային դերակատարության դիտարկումը հանրային**

հավաքներ անցկացնելու քաղաքական իրավունքի իրացման մեխանիզմում:›› (ատենախոսության 10-11-րդ էջեր):

Սակայն, կարծում ենք, որ խաղաղ հավաքների ազատության իրավունքի արդյունավետ իրացման խնդրի լուծումը միայն իրավական մշակույթի զարգացման առանցքային դերակատարությամբ պայմանավորված չէ, այլ համալիր լուծումներ է պահանջում, ինչի մասին նշում է ատենախոսը թե՛ ուսումնասիրության հիմնական մասում, թե՛ եզրակացության մեջ:

Ընդ որում, ներածության մեջ որպես գիտական նորույթ ձևակերպված վերոնշյալ 8-րդ դրույթը երկատված ձևով ներառվել է ատենախոսության ամփոփիչ հատվածում՝ եզրակացությունում, առաջին մասը որպես 5-րդ եզրակացության սկիզբ, իսկ երկրորդ մասը՝ 9-րդ եզրակացության հետևություն:

Այսպես՝ ատենախոսության 141-ից 144-րդ էջերում շարադրված են թվով 10 եզրակացություններ, որոնցից 5-րդը հետևյալն է.

‹‹5. Խաղաղ հավաքների ազատության իրավունքի «ճակատագիրը» հեռանկարային զարգացման հաջորդիվ շրջափուլերում կարող է հստակ արտահայտվել միայն այն դեպքում, երբ իրական ճանաչվեն պետության և քաղաքացիական հասարակության քաղաքակիրթ փոխազդեցությունը, ինչն էլ ենթադրում է հետագայում կատարելագործել հասարակական նախաձեռնությունների մեխանիզմը՝ միմյանց (պետություն և քաղաքացիական հասարակություն) վստահելու մակարդակի բարձրացմամբ, հավաքների ազատության իրավունքի կարգավորման վերաբերյալ որոշումներ կայացնող պատասխանատու մարմնի իրավական կարգավիճակի ամրագրմամբ և գործառույթների հստակ սահմանմամբ: Խաղաղ հավաքների ազատության իրավունքի արդյունավետ իրացման խնդիրը լուծելու համար կարևորում ենք նաև պատշաճ քննության իրականացումը, որի արդյունքում որոշում կընդունվի կասեցնել, ոչ թե դադարեցնել հավաքը:›› (ատենախոսության 142-րդ էջ):

Ակնհայտ է, որ այստեղ հեղինակը, ի տարբերություն ներածության մեջ որպես գիտական նորույթ շարադրված 8-րդ դրույթի, իրավացիորեն մի քանի կարևոր

պայմաններ է նշում, իսկ իրավական մշակույթի զարգացման առանցքային դերակատարության մասին կարդում ենք 9-րդ եզրակացությունում, սակայն հետևյալ համատեքստում.

‹‹9. **Հանրային միջոցառումների հուզական-զգացմունքային բաղադրիչը մի կողմից թույլ չի տալիս հավաքին վերաճել առավել ծայրահեղ դրսևորման (զանգվածային անկարգություններ, հեղափոխություններ, զինված ապստամբություններ և այլն)՝ երաշխավորելով անհամաձայնության և դժգոհության նվազեցումը, մյուս կողմից էլ պատճառ է հանդիսանում, որ հավաքների ազատությունը ոչ մի իրավասության շրջանակում չդիտարկվի բացարձակ: Դա է պատճառը, որ հավաքների ազատության իրավունքի արդյունավետ իրացման խնդիրը լուծելու համար, նպատակահարմար է դիտարկել իրավական մշակույթի զարգացման առանցքային դերակատարությունը հանրային հավաքներ անցկացնելու քաղաքական իրավունքի իրացման մեխանիզմում**:›› (ատենախոսության 144-րդ էջ):

Կարծում ենք, վիճելի է այս պնդումը, քանի որ հանրային միջոցառումների հուզական-զգացմունքային բաղադրիչը միշտ չէ, որ ‹‹երաշխավորում›› է անհամաձայնության ու դժգոհության նվազում և ինքնին կանխում հավաքը առավել ծայրահեղ դրսևորման վերաճելու գործընթացը: Ընդհակառակը՝ հենց մեծ թվով մարդկանց համատեղ հուզական վիճակը կարող է ‹‹սրել›› անհամաձայնության ու դժգոհության զգացումները և առաջացնել պայթունավտանգ իրավիճակ:

4. Ողջունելի են ատենախոսության մեջ բազմաթիվ միջազգային իրավական ակտերի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումների, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի հանձնարարականների, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության՝ «Հավաքների ազատության ղեկավար սկզբունքների վերաբերյալ ուղեցույց»-ի մեջբերումները, սակայն, մեր կարծիքով, ուսումնասիրությունն առավել կարժևորվեր, եթե դրանց վերլուծությունը հիմք դառնար Հայաստանի Հանրապետությունում խաղաղ հավաքների ազատության

իրավունքի օրենսդրական հիմքերի վերանայման, իրացման կառուցակարգերի կատարելագործման ու արդյունավետության բարձրացման, իրավակիրառ պրակտիկայի բարելավմանն ուղղված հիմնավոր առաջարկությունների ներկայացման համար:

5. Ատենախոսությունը շարադրված է գրագետ մասնագիտական լեզվով, սակայն տեքստի տարբեր մասեր են սպրդել տառասխալներ ու վրիպակներ (ատենախոսության էջեր 11, 22, 47, 56, 57, 58, 63, 66, 78, 79, 84, 90, 109, 113, 115, 122, 123, 139-րդ և այլն):

Այսուհանդերձ, գտնում ենք, որ վերոնշյալ նկատառումները բնավ չեն ստվերում ատենախոսության գիտական արժեքը, քանի որ կատարվել է հիմնախնդրի առաջին լուրջ հետազոտությունը, որը հիմք կդառնա հետագա ուսումնասիրությունների համար:

Կարևորում ենք նաև այն հանգամանքը, որ ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի 7 գիտական հոդվածներում, որոնք հրապարակվել են 2018-2023 թվականներին:

Այսպիսով, մեր կարծիքով,

1.Ամալյա Գագիկի Սաֆարյանի՝ ‹‹Հավաքների ազատության սահմանադրական հիմքերի իրացման արդի հարցադրումները›› վերտառությամբ ԺԲ.00.02՝ ‹‹Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում)›› մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը համապատասխանում է ներկայացվող պահանջներին, և

2.ատենախոսության հեղինակն արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Ռուզաննա Խաչիկի Հակոբյան
իրավաբանական գիտությունների
դոկտոր, դոցենտ,
Գավառի պետական համալսարանի

հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի
իրավագիտության ամբիոնի դասախոս, ԳՊՀ ռեկտոր

23.09.2024թ.

Ռ. Հակոբյանի ստորագրությունը
հաստատում եմ:

Թաթուլ Արտիկի Ասոյան՝ Գավառի պետական համալսարանի
գիտական քարտուղար,
բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ

23.09.2024թ.